

կայ՝ այնտեղ իւրաքանչիւր մի անդամը նոյն-
 չափ կարեւոր է, որչափ և միւսը: Ծառ հին,
 նաև հեթանոսական աշխարհին ծանօթ ճը-
 մարտութիւն է այդ, բայց քրիստոնէութեան
 մէջ առանձին նշանակութիւն է ստանում նո-
 րանով, որ այստեղ գործը բաժանողը, իւրա-
 քանչիւրին իւր աշխատութեան համեմատ
 վարձատրողը և արդիւնքը ժողովոյն Աստուած
 է, մեր Երկնաւոր Հայրը, որ մարդկային
 չափերով չի չափում և աշխատաւորներին
 այլ և այլ անձնաշնորհութիւնների համեմատ
 առաւելութիւն տալիս, այլ նայում է, թէ
 ո՞վ ինչպէս է կատարել իւր պարտքը, որ-
 չափ շահեցրել իրեն տուած քանքարը: Ծորա
 համար նշանակութիւն չունի, թէ, մէկը նա-
 խարար է եղել, ամբողջ երկիր կառավարել,
 միւսը մի հասարակ զբաղիր, որ կպած մնա-
 ցել է իւր զբաւեղանին. մէկը քահանայապետ
 է եղել, Աստուծոյ սեղանից օրհնութիւն բաշ-
 խել ժողովրդին՝ միւսը ժամկոչ, որ աւելել է
 այդ սեղանի պատուանդանը. մէկը իւր հարբա-
 տութեամբ կամ զիտութեամբ սարեր է տե-
 ղից հանել և գետեր շրջել՝ միւսը միայն իրեն
 աշխատող ձեռք բանել է. մէկը հասարակա-
 կան պաշտօնի մէջ է եղել, միւսը իւր ընտա-
 նիքի իւր գաւախների հոգսը քաշել. ամէ-
 քը հաւասար են այստեղ: Այն ահագին տըն-
 տեսութեան մէջ, որի ղեկավարը մեր Երկնա-
 վոր Հայրն է, անպէտք անօթ չկայ՝ ամէնքն
 իրենց կոչումն ունին. կոչում ունին նաև
 կողերը, կոյրերը, անդամալոյճները, որոնք ի-
 րենց թշուառ պատկերով դժութեան զգաց-
 մունք են դարձեցնում մեր մէջ և սովորե-
 ցնում աշխատել ընկերի համար այնպէս ինչ-
 պէս թէ մեր համար աշխատեինք. նոքա հիւ-
 րերն են Աստուծոյ սեղանի, որի մօտ բազմե-
 լու իրաւունք չունին միայն ծոյլ ծառաները,
 մարդկութեան մեծ ընտանիքի անդործ ան-
 դամները՝ բոլորեքեան նոքա, որոնք ոչ
 մի կոչում չեն ընտրել, ոչ մի աշխատանք
 չունին, այլ գողանում և վայելում են հա-
 սարակաց աշխատութեան պտուղները—գողա-
 նում են կամ ական փորելով և ամանելով,
 կամ մուրացկանութեամբ ձեռք պարզելով,
 կամ հասարակաց զանձարանում մեռեալ դէ-
 բամազլուխ շահեցնելով և ներկայանալով իրեն

իրաւտեք օտարի վաստակոց, լինի այդ օտա-
 րը իւր հայրը, իւր եղբայրը:

Կ. Վ.



ԻՆՉ Է ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆԸ.

ԻՆՉ է երջանկութիւնը, որոնք են
 նորա էական պայմանները, ինչ է պահան-
 ջուում իրօք երջանիկ լինելու համար աշ-
 խարհիս վրայ—ահա՛ հարցեր, որոնց պատա-
 խանը փորձել են տալ բոլոր իմաստասէրնե-
 րը՝ սկսած ամենահին ժամանակներից: Երջա-
 նիկ ապրելու ցանկութիւնը միշտ յատուկ է
 եղել մարդկանց, այդ ցանկութիւնը միշտ էլ
 կունենան նոքա, ուստի և բարոյագիտութեան
 մէջ միշտ բնականաբար ամենակարևոր տեղը
 պիտի ունենան երջանկութեան գաղտնարը և
 երջանկութիւնը պայմանաւորող հանգամանք-
 ների վերաբերեալ խնդիրները:

Բայց մի՞թէ դարերի ընթացքում յա-
 ռաջ խաղացող քաղաքակրթութիւնը մեզ մին-
 չև պսօր ցոյց չէ տուել, թէ, որոնք են ճըշ-
 մարիտ երջանկութեան պայմանները, թէ, ինչ
 պիտի անենք, ինչպէս պիտի ապրենք, որ եր-
 ջանիկ լինինք: Բրիտանի համար դժուար չէ
 այդ ցուցումները գտնել Երկնաւոր Ուսուցչի
 վարդապետութեան մէջ, եթէ միայն նա ճըշ-
 մարտապէս հաւատում է, որ Փրկչին հեռեկե-
 լով անպատճառ հասնելու է երջանկութեան.
 Բայց ո՞վ չէ տեսնում, որ մարդկութիւնը գեռ-
 շատ հեռու է այն կեանքից, որ առաջարկում
 է նորան Բրիտան, ո՞վ չի խոստովանել, որ
 գեռ Աւետարանի ուսումը չէ, մեր առաջնոր-
 դը, որ երջանիկ ապրելու համար մենք բնաւ
 այն չենք որոնում, ինչ որ ցոյց է տալիս Փրկ-
 կիչը: Մենք կառավորուում ենք մեր առօ-
 րեայ կեանքում մի ուրիշ վարդապետութեամբ,
 որ ոչինչ աւնչութիւն չունի Բրիտանի վար-
 դապետութեան հետ, այդ երկու ուսումը
 Լիվանց մինչ այն աստիճան հակառակ են, որ
 կարող ենք հաւատաւ ասել թէ, մարդ մէկին հե-
 տեկելով՝ անպատճառ միւսի հակառակ է գոր-

ծուսն Ստեփան Բրիտտոսի ուսումն այնքան պարզ է և այնքան համոզիչ որ նորան չհեռակեցրայ նորանով չառաջնորդուելը միայն մարդկութեան կուրուժիւնն է սպացուցանում:

Բրիտտոսի այդ մաքուր ուսման ջերմ քարոզիչն է և աշխարհի ուսման զօրաւոր հակառակորդը՝ ուս աշխարհահռչակ վիպասան և իմաստասէր Լ. Տոլստոյը, որի հայտնաբերւած երջանկութեան մասին յառաջ ենք բերում այստեղ:

Բրիտտոս ճշմարտութիւն է ուսուցանում ստում է Տոլստոյը և եթէ վերացական ճշմարտութիւնը ճշմարտութիւն է, ճշմարտութիւն կլինի այն և իրականութեան մէջ: Եթէ Աստուծոյ հետ ապրելը միակ ճշմարտա երջանիկ կեանքն է ինքն ըստ ինքեան, այդ կեանքը ճշմարտ է, երջանիկ է և այստեղ, երկրի վրայ, ինչ էլ որ պատահի: Բրիտտոս ասում է, որ իւր աշակերանները պիտի հալածուին իւր ուսման համար և պէտք է համբերեն ուղիմանան աշխարհի հալածանքներին. բայց նա չէ ասում թէ իւր ուսմանը հետեւելով նորա աւելի զրկանքներ կը կրեն, քան աշխարհի ուսմանը հետեւելով. ընդ հակառակը՝ Ծա ասում է թէ աշխարհի ուսման հետեւողները անբաղդ կը լինին իսկ իւր ուսման հետեւողները երջանիկ կը լինին: Բրիտտոս ասում է, թէ հենց աշխարհօրէն ձեռնասու է չհոգալ աշխարհի կեանքի մասին:

Եթէ վերացականապէս քննելու լինինք այն խնդիրը թէ ու՞մ վիճակն աւելի լաւ կը լինի՝ Բրիտտոսի աշակերանների թէ՞ աշխարհի աշակերանների, չենք կարող չտեսնել, որ Բրիտտոսի աշակերանների վիճակն աւելի լաւ պիտի լինի հենց այն պատճառով, որ նորա ամենքին բարի անելով մարդկանց մէջ առելութիւն չեն զարթեցնի: Բրիտտոսի աշակերանները չար չզործելու պատճառով, միայն չար մարդկանցից կարող են հալածուել. իսկ աշխարհի աշակերաններին ամենքը կը հալածեն որովհետեւ նոցա կեանքի օրէնքը մարտաւանդ այսինքն միմեանց հալածելու օրէնքն է: Չարչարուելու պատահականութիւնը միենոյնն է թէ Բրիտտոսի և թէ աշխարհի աշակերանների համար. զանազանութիւնն այն է միայն, որ Բրիտտոսի աշակերանները պատրաստ կը լինին չարչարուելու:

Իսկ աշխարհի աշակերանները ամէն հնար գործ կը զենն չարչարանքից խոյս տալու համար. Բրիտտոսի աշակերանները չարչարուելիս պիտի մտածեն, որ իրենց չարչարուելն հարկաւոր է աշխարհի համար, իսկ աշխարհի աշակերանները չեն իմանայ թէ ինչի համար են չարչարուում: Վերացականապէս դատելով՝ Բրիտտոսի աշակերանների վիճակն աւելի ձեռնասու պիտի լինի աշխարհի աշակերանների վիճակից:

Այս բանն ստուգելու համար թող ամէն մարդ միաբ բերէ իւր կեանքի բոլոր ծանր բոլակները, այն բոլոր մարմնաւոր և հոգեկան տառապանքները, որոնց ինքը ենթակայ է եղել, և հարցնէ ինքն իրեն՝ յանուն ինչի է ինքը ենթարկուել այդ բոլոր դժբաղդութիւններին, յանուն աշխարհի, թէ՞ Բրիտտոսի ուսման: Թող ամէն անկեղծ մարդ լաւ միաբ բերէ իւր կեանքը և նա կը տեսնէ, որ երբէք ոչ մի անգամ նա չէ տանջուել Բրիտտոսի ուսումը կատարելուց, այլ մեծ մասը իւր կեանքի դժբաղդութիւններից յառաջ է եկել նորանից, որ ինքը հակառակ իւր հակումներին՝ հետեւ է իրեն կաշկանդող աշխարհի ուսմանը:

Իսկապէս մենք բոլորս աշխարհի ուսման նահատակներ ենք, բայց չենք տեսնում այդ ուսումը գործադրելու բոլոր վտանգներն ու նեղութիւնները, որովհետեւ կարծում ենք, թէ մեր այդ ուսման համար կրած բոլոր զրկանքներն անհրաժեշտ են:

Մենք մի անգամ հաւատացել ենք, որ այն բոլոր դժբաղդութիւնները, որ մենք ստեղծում ենք մեզ համար մեր կեանքի անհրաժեշտ պայմաններն են, ուստի և չենք կարողանում հասկանալ, որ Բրիտտոս հենց այն է ուսուցանում թէ ինչպէս ազատուելք մեր դժբաղդութիւններից և բաղդաւոր ապրելք: Մենք պէտք է գէթ մեր մաքի մէջ հրաժարուելք այս սխալ հասկացողութիւնից և առանց կանխակալ կարծիքի մեզ ու մեր շուրջը նայելք, որպէս զի կարող լինինք կշռադատել թէ որ կեանքն է բաղդաւոր:

Մտէք մարդկանց մի մեծ խմբի մէջ մանաւանդ քաղաք տեղերում ու շարժրէք այդ յոգնած, վրդովուած, հիւանդոտ գէմբե-

ըին և յետոյ յիշեցէք ձեր կեանքը, յիշեցէք ուրիշների կեանքը, որի մանրամասնութիւնները ձեզ ծանօթ են. միտ բերէք այն բոլոր բանի մահերը, բոլոր ինքնասպանութիւնները, որոնց մասին դուք լսած կը լինիք և հարցրէք թէ, յանուն ինչի են տեղի ունենում այդ բոլոր տառապանքները, տանջանքն ու յուսահատութիւնները, որ ինքնասպանութեանց են հասցնում: Եւ դուք կը տեսնէք, որ տառապանքների ինը տասներորդականը մարդիկ քաշում են յանուն աշխարհի ուսման, որ այդ բոլոր տառապանքները պէտք չեն և կարող էին չլինել, որ մարդկանց մեծ մասը աշխարհի ուսման նահատակ է:

Եթէ քննելու լինինք մարդկանց կեանքը, սկսած հարստից մինչև վերջին աղքատը, կը տեսնենք որ դոցանից ոչ ոք գոհ չէ իւր վիճակից, ոչ ոք բաւական չէ համարում իւր ունեցածը, այն ինչ որ անհրաժեշտ է ձանաչուում՝ աշխարհի ուսման համեմատ: Ամէն ոք չարչարուում է, իւր բոլոր ոյժերը գործ է դնում ձեռք բերելու համար այն ինչ որ իրեն պէտք չէ իրօք, բայց որ պահանջում է նորանից աշխարհի ուսումը և որի չլինելը նորա համար անբաղդութիւն է: Եւ հենց որ ձեռք բերուի այդ պահանջուածը, նորանից էլի ու էլի նոր բաներ կը պահանջուին անվերջ—Սիսիփոսի աշխատանք, որ մարդկանց կեանքն է խորտակում: Բոլորն էլ չարչարուում են իրենց ունեցածն աւելացնելու համար. 300 ունեցողը տանջուում է 400 ձեռք բերելու համար, 400 ունեցողն անպատճառ ուզում է 500 ունենալ ևլն ևլն: Բոլորն էլ ուժից վեր աշխատութեամբ ծանրացնում են իրենց առանց այն էլ ծանրացած կեանքը, իրենց հոգին ամբողջ տալիս են աշխարհի ուսմանը:

Բայց դուցէ այդպիսի կեանքն ինքն ըստ ինքեան բաղդաւոր է:

Եթէ, չափենք այդ կեանքը այն բանի չափով, ինչ որ մարդիկ միշտ երջանկութիւն են համարել, կը տեսնենք որ այդ կեանքը սաստիկ անբաղդ է: Իրաւ, որո՞նք ենք երկրաւոր բաղդաւորութեան գլխաւոր պայմանները, այն պայմանները, որոնց մասին ոչ ոք չի վիճել:

Երջանկութեան առաջին պայմաններից մ-

կը, որ ամէնքն էլ ընդունում են, այնպիսի կեանքն է, երբ մարդ բնութիւնից կարուած չէ, այսինքն՝ բաց երկնքի արեւի լոյսի տակ լծարմօցում ապրելը և հաղորդակցութիւն երկրի, բոյսերի, կենդանիների հետ: Այս բանից զուրկ լինելը բոլոր մարդիկ միշտ էլ մեծ անբաղդութիւն են համարել: Բանտարկեալներն ամենից աւելի են զգում այս զրկանքը: Այժմ տեսնենք աշխարհի ուսման համեմատ ապրող մարդկանց կեանքը:

Որքան շատ յաջողութիւն են գտել նոքա ըստ աշխարհի ուսման այնքան աւելի զուրկ են երջանկութեան այս պայմանից: Որքան բարձր է նոցա ձեռք բերած աշխարհային երջանկութիւնը, այնքան քիչ են տեսնում նոքա արեւի լոյսը, դաշտեր ու անտառներ, վայրի ու ընտանի կենդանիներ: Ծառերը նոցանից—կանայք գրեթէ բոլորը—ծերանում են, իրենց կեանքում հաղիւ մի-երկու անդամ տեսած լինելով արեւի ծագումը և առաւօտը, իսկ դաշտ ու անտառ տեսնում են միայն ճանապարհ գնալիս կառքի կամ վագոնի պատուհանից. լսում են դոքա միայն կառքերի մեքենաների, նուազարանների ձայներ, տեսնում են միայն գործուածքների քարեր, մարդու ձեռքով մշակած փայտ ևլն, մի խօսքով իսպառ զրկուած են կենդանի բնութեան հետ որ և է առնչութիւն ունենալուց:

Երջանկութեան երկրորդ աներկրային պայմանն է աշխատանքը, նախ՝ սիրած և ազատ աշխատանք, երկրորդ՝ ֆիզիքական աշխատանք, որ ախորժակ է բաց անում և հանգստացնող խոր քուն բերում:

Այս պայմանիցն էլ մարդիկ այնքան աւելի զուրկ են, որքան ըստ իրենց կարծեաց մեծ երջանկութեան են հասել՝ աշխարհի ուսման համեմատ: Աշխարհի բոլոր բաղդաւորները, չինովնիկներն ու հարուստները, կամ կալանաւորների նման բոլորովին զրկուած են աշխատանքից և ապարդիւն մաքաւում են հիւանդութեանց դէմ, որ յատաճ են գալիս ֆիզիքական աշխատանքի բացակայութիւնից, և աւելի ապարդիւն՝ իրենց յաղթող ձանձրոյթի դէմ (ապարդիւն, որովհետեւ աշխատանքը միայն այն ժամանակ է ուրախաբեր, երբ անշուշտ հարկաւոր է, իսկ նոցա ոչինչ

պէտք չէ) կամ իրենց համար ատելի գործ են կատարում («ատելի» որովհետեւ ոչ ոք իւր աշխատանքից գոհ չէ և զէթ այնպիսի հաճութեամբ չէ աշխատում ինչպէս մի գոնապան) որ տան առաջի ձիւնն է մարբում): Բոլոր այս բաղդաւորները կամ իսպառ դուրի են աշխատանքից կամ իրենց չտիրած աշխատանքն են անուամբ այսինքն՝ տաժանակիր աշխատանքի դատապարտուածներին վիճակն ունին:

Երջանկութեան երբորդ հաստատուն պայմանն ընտանիքն է: Եւ դարձեալ մարդիկ որքան մեծ աշխարհային յաջողութիւն են գանուամբ այնքան աւելի հեռանում են այս երջանկութիւնից: Եղբա մեծ մասամբ անառակ են և զխտակցարար հրաժարուում են ընտանիքի տուած ուրախութիւնից, ենթարկուելով միայն նորա անյարմարութիւններին: Եթէ անառակ չեն, երեխաները նոցա համար ուրախութիւն չեն, այլ բեռը: Եթէ երեխաներ էլ ունին, զրկուած են նոցա հետ հազորդակցութիւն ունենալու ուրախութիւնից: Եղբա իրենց օրէնքների համաձայն պէտք է երեխաներին տան բոլորովին օտար մարդկանց, սկզբում օտարազգիներին իսկ յետոյ դատարանների այնպէս որ ընտանիքը նոցա միայն վիշտ է օալիս—երեխաներ, որոնք փոքրուց իրենց ծնողների նման անբաղդ են վիճում և որոնք ծնողների համար միայն մի զգացմունք են ունենում, այն է՝ նոցա մահն են ցանկանում, որպէս զի ժառանգութիւն ստանան: Եղբա բանաւում փակուած չեն, բայց նոցա կեանքի հեռանքները ընտանիքի վերաբերութեամբ աւելի տաժանելի են, քան բանասարկուածներին ընտանիքից զրկուած լինելը:

Երջանկութեան չորրորդ պայմանն է ազատ սիրով հաղորդակցութիւն աշխարհիս բոլոր բազմաստեակ մարդկանց հետ: Եւ դարձեալ որքան բարձր աստիճանի են հասնում մարդիկ այս աշխարհում, այնքան աւելի զըրկուած են լինում բաղդաւորութեան այս զըրխաւոր պայմանից: Որքան բարձր, այնքան նեղ ու սահմանափակ է մարդկանց այն շրջանը, որոնց հետ կարելի է հաղորդակցութիւն ունենալ, և այնքան ստոր են իրենց մտաւոր ու բարոյական զարգացմամբ այդ կախարդական շրջանը կազմող մարդիկ:

Վերջապէս երջանկութեան հինգերորդ պայմանն առողջութիւնն է և մահն ստանց հիւանդութեանց: Եւ դարձեալ որքան բարձր են կանգնած մարդիկ հասարակաց սանդուղքի վրայ, այնքան աւելի զուրկ են նոքա բաղդաւորութեան այս պայմանից: Վերցնենք, օրինակի համար, միջին հարսակն ու իւր կնոջը և միջին զիւղացուն ու իւր կնոջը, կը տեսնենք, որ զիւղացին ու իւր կինը՝ չնայելով իրենց խեղճ ապրուստին ու ծանր աշխատանքին, աւելի առողջ են, քան հարուստն ու իւր կինը:

Քրիստոսի ուսումը կատարելը դժուար է: Քրիստոս ասում է, ով ուզում է հեռեւել ինձ, լծող լծողնէ, տուն ու տեղ ու իւր մեքձաւորներին, և նա կստանայ այս աշխարհում դոցա հարիւրապատիկը և բացի դորանից՝ յաւիտեանական կեանք: Եւ ոչ ոք չէ հեռեւում Քրիստոսին: Իսկ աշխարհի ուսումն ասում է, լծող տունդ, արտերդ, եղբայրներդ, հեռացիր զիւզից և գնա հոսած քաղաքը: Եւ ոչ ոք այս դժուար չէ համարում: Ոչ միայն քաղաք գնացող որդիքը, այլ և նոցա ծնողները դժուար բան չեն համարում այդ: Եղբա մինչև անգամ խորհուրդ են տալիս իրենց որդոցը քաղաք տեղափոխուել, նոցա լծուում է, որ այդ ոչ միայն հարկաւոր է, այլ և լաւ է ու բարոյական:

Կարելի էր հաւատալ, թէ Քրիստոսի ուսումը կատարելը դժուար է և տաժանելի, եթէ աշխարհի ուսումը կատարելը շատ հեշտ լինէր, և անվտանգ, և ակորժելի: Բայց չէ՞ որ մենք հակառակն ենք տեսնում:

Մի ժամանակ եղել են Քրիստոսի նահատակներ, բայց իբրև բացառութիւն. 1800 տարուան ընթացքում կամայ և ակամայ նահատակների թիւը հաշուում են 380 հազար, բայց հաշուեցէք աշխարհի նահատակներին—և Քրիստոսի մի նահատակին կընկնի աշխարհի ուսման 1,000 նահատակ, որոնց սանձանքները հարիւրապատիկ ստեղծել են: Միայն այս դարու պատերազմներում սպանուածների թիւը հաշուում են մինչև երեսուն միլիոն հոգի:

Զէ՞ որ դոքա բոլորը աշխարհի ուսման նահատակներ են, որովհետեւ եթէ մարդկու-

Թիւնը Բլիստոսի ուսմանը հեռեւէր մարդիկ միմեանց չէին սպանիլ:

Պէտք չէ անբաւանաս նահատակ դառնայ յանուն Բլիստոսի այդ չէ քարոզում Բլիստոս: Ծռ ուսուցանում է թէ պէտք չէ չարչարուել յանուն աշխարհի սուտ ուսման:

Բլիստոսի ուսումն ունի խորին բնական-ցական իմաստ. Բլիստոսի ուսումը հանրամարդկային խորհուրդ ունի. Բլիստոսի ուսումն ունի և պարզ գործնական իմաստ ամեն մի մարդու կեանքի համար: Այդ իմաստը կարելի է արտայայտել այսպէս. Բլիստոս ուսուցանում է մարդկանց յիմարութիւններ չանել: Այս է Բլիստոսի ուսման շատ պարզ բոլորին մատչելի իմաստը:

Բլիստոս ասում է. մի բարկանայ ոչ որքի քեզանից ստոր մի համարիր—այդ յիմարութիւն է: Կը բարկանաս ուրիշներին կը դրկես՝ փնտր քեզ կը հասնի: Եւ ի ասում է. չարի փոխարէն չար մի հատուցանիր թէ չէ՝ չարք քեզ վրայ կը դառնայ առջուտանից էլ փաթար կերպով: Ծ դարձեալ ասում է. մարդկանց օտար մի համարիր միայն այն պատճառով որ նորա որիշ երկրում են ապրում և ուրիշ լեզուով են խօսում: Ծ Թ դու նոցա թշնամի համարես նոքա էլ քեզ թշնամի կը համարեն—փնտր քեզ կը հասնի: Ուրեմն այս բոլոր յիմարութիւնները մի անիր և քեզ համար աւելի լաւ կը լինի:

Բլիստոս կոչում է մարդկանց դէպի ջրի աղբիւրը, որ նոցա շատ մօտիկ է: Մարդիկ պապակուում են ծարաւից, ցիխ են ուտում միմեանց արիւնն են խմում բայց նոցա ուսուցիչներն ասել են թէ կը կորչեն և թէ գնան Բլիստոսի ցոյց տուած աղբիւրի մօտ: Ծ մարդիկ հաւատում են նոցա ամենում են ու մեռում ծարաւից՝ ջրի կողքին և չեն համարձակում մօտենալ նորան: Բայց բաւական է միայն հաւատալ Բլիստոսին թէ նա բարիք է բերել երկրի վրայ հաւատալ որ նա մեզ ծարաւիներիս կենդանի ջրի աղբիւր է տալիս մօտենալ նորան և մենք կը տեսնենք թէ ինչ նենդաւոր է աշխարհի ուսուցիչների խաբէութիւնը և թէ ինչ անմիտ է մեր տառապանքը. քանի որ այդքան մօտ է մեր վրիւթիւնը: Բաւական է որ ուղղամը-

տութեամբ ու պարզութեամբ ընդունենք Բլիստոսի ուսումը, և մեզ համար անկոյսյանի կը լինի այն սոսկալի խաբէութիւնը, որով ապրում ենք ա՛նքս և խաբէանցիւրը մեզանից:

Մենք է սերունդ աշխատում ենք մենք ապահովել բանութեամբ մեր կեանքն ու մեր սեպհահանութիւնը: Մեզ այնպէս է երևում թէ ամենամեծ իշխանութիւնը և ամենամեծ սեպհահանութիւնը մեր կեանքի երջանկութիւնն է: Մենք այնպէս ենք ընտելացել այս բանին որ Բլիստոսի ուսումը թէ մարդու բողոքաւորութիւնը չի կարող կախուած լինել իշխանութիւնից ու ստացուածքից, թէ հարուստը չի կարող երջանկի լինել մեզ երևում է իբրև զոհարեութեան պահանջ յանուն ապագայ բարիքների: Բլիստոս մեզանից զոհ պահանջել չէ էլ մտածում: Ծ այն ընդհակառակն ուսուցանում է մեզ շանել այն ինչ որ վատ է այլ անել այն ինչ որ լաւ է մեզ համար այստեղ, այս կեանքում: Բլիստոս սիրելով մարդկանց ուսուցանում է հեռու մը նալ բանութեամբ անձն ապահովելուց և սեպհահանութիւնից նոյնպէս ինչպէս որ սիրելով մարդկանց՝ քարոզում է հեռու մնալ կուսից ու արբեցողութիւնից:

Մենք այն սխալ համոզմունքն ունինք թէ ուրիշ մարդկանց դէմ մարտաւելով կարող ենք մեր կեանքն ապահովել: Մենք այնպէս ենք ընտելացել այս խաբէութեանը որ չենք էլ նկատում այն բոլորը ինչ որ կորցնում ենք այդ պատճառով իսկ կորցնում ենք ամեն բան—մեր բոլոր կեանքը: Մեր ամբողջ կեանքն անց է կենում կեանք ապահովելու կեանքի համար պատրաստուելու հոգսերով այնպէս որ էլ կեանք բնու չէ մնում:

Ծ Թ լաւ քննենք մեր կեանքը կը տեսնենք որ այն ամէնը ինչ որ անում ենք իբր թէ մեր կեանքն ապահովելու համար, մենք անում ենք ոչ թէ կեանք ապահովելու համար, այլ նորա համար որ դորանով զբաղուելով՝ մոռանանք որ մեր կեանքը երբեք ապահովուած չէ և չէ էլ կարող ապահովուած լինել: Բայց դեռ բաւական չէ որ մենք խաբում ենք մեզ և խորատկում ենք մեր խելական կեանքը երևակայականի համար, այլ յաճախ

ձգտելով դէպի ապահովութիւնս խորտակում
 ենք հէնց այն ինչ որ ուզում ենք ապահովել:
 Փրանսիացիք զինուում են իրենց կեանքն
 ապահովելու համար 70 թուին, և այդ
 ապահովուց հարիւր հազարաւոր ֆրանսիացիք
 են կոտորուում միեւնոյն բանն են անում
 բոլոր սպառազինուող ազգերը: Հարուստ մարդը
 ապահովում է իւր կեանքը փող զիզելով փողը
 զբաւում է աւագակինս որ սպանում է նորան:

Քրիստոսի ուսումը, թէ կեանքը կարելի
 չէ ապահովել, այլ պէտք է միշտ ամէն բոսկ
 մեռնելու պատրաստ լինել, աւելի լաւ է, քան
 աշխարհի ուսումը, թէ պէտք է կեանք ապահովել,
 աւելի լաւ է, որովհետեւ այդ երկու դէպքումն էլ
 մահուան անխուսափելի լինելը և կեանքի
 անապահովութիւնը միեւնոյնն է մնում,
 բայց ինքը կեանքը, Քրիստոսի ուսման
 համեմատ գործ չէ դրուում կեանք ապահովելու
 ունայն զբաղմունքի վրայ, այլ ազատ է լինում
 և կարող է արուել մի իրեն յատուկ նպատակի
 այն է՝ բարիք գործել անձին և ուրիշներին:
 Քրիստոսի աշակերտը ազատ կը լինի այն
 այսինքն նա կը վայելէ Աստուծոյ տուած
 բոլոր բարիքները: Ծա չի խորտակել իւր
 կեանքը: Ծւ ինչ է նշանակում ազատայց
 նշանակում է, որ նա քաղաքում չի ապրել,
 այլ գիւղումն տանը չի նստել, այլ կաշխատե
 զաշտումն անտառումն կը տեսնէ, արեւի
 բոլոր երկիրս երկինքս կենդանիներս, զլուսն
 չի կորել, թէ ինչ ուտե ակործակ զբոստելու
 համար, այլ օրը երեք անգամ կը սովածանայ,
 չի թաւալ տայ փափուկ բարձերի վրայ և չի
 մտածիլ թէ ինչպէս ազատուի անքնութիւն
 ից, այլ կը քնէ երկխաներ կունենայ կապրե
 նոցա հետ, ազատ հազորդակցութիւն կունենայ
 բոլոր մարդկանց հետ և, որ զխաւորն է,
 իւր չկամեցած բանը չի անիլ, ապագայի
 համար եկիւղ չի ունենայ: Կը հիւանդանայ
 կը տանջուի կը մեռնի բոլոր նման բայց
 անտարակոյս կապրի աւելի բաղդաւորս
 քան ուրիշները:

Պէտք է վերականգնել բոլոր չարակաւ
 նուած մարդկանց յատուկ այն զաղափարը,
 թէ երջանկութեան անհրաժեշտ պայմանը ոչ թէ
 պարապութիւնն այլ աշխատանքն է, որ մարդ

ձանձրանում նեղում է առանց աշխատութեան:
 Պէտք է մոռանանք մեր վայրենի նախապաշարմունքը
 թէ չաշխատող հարուստը բաղդաւոր է:
 Քրիստոս չէր կարող այնպիսի մարդիկ
 երեւակայել, որոնք աշխատութիւնը նզովք
 համարէին, ուստի և միշտ հասկանալի է
 համարում ինքն ըստ ինքեանս թէ իւր աշակերտը
 աշխատում է: Ծւ ասում է նա, եթէ մարդ
 աշխատի, աշխատութիւնը կը կեքակրէ
 նորան: Քրիստոս քարոզում է, թէ իւրաքանչիւր
 որ ամենալաւ կեանքը կունենայ, եթէ
 հասկանայ իւր կոչումը—ուրիշներից
 աշխատանք չպահանջէ, այլ ինքը միշտ
 աշխատի ուրիշների համար: Քրիստոս
 ցոյց է տալիս որ մարդ ապահովում է իւր
 սնունդը ոչ թէ ուրիշներից լսելով, այլ ուրիշների
 համար պիտանի օգտակար լինելով: Որքան
 մի մարդ աւելի պիտանի լինի ուրիշների
 համար, այնքան աւելի ապահովուած կը լինի
 նորա գոյութիւնը: Քրիստոսի ուսման անգործ
 մարդիկ լինելու դէմ արած այն առարկութիւնը
 թէ, եթէ ես չվաստակեմ ինձ համար ու
 վաստակածս չպահանջեմ իմ ընտանիքը
 պահող չի լինի՝ արդարացի է միայն
 դատարկագորտ, անօգուտ, ուստի և
 վնասակար մարդկանց վերաբերութեամբ:
 Քրիստոս ասում է, որ աշխատութիւնը
 մարդու կեանքի անհրաժեշտ պայմանն է
 և որ աշխատութիւնը բարիք է տալիս
 մարդու: Ուստի սեպհական կամ ուրիշ
 աշխատութեան պտուղներն ուրիշ
 մարդկանցից ինչպիսիք արդէլք է լինում
 մարդու բարիքին: Սեպհական
 աշխատանքն ուրիշներին տալը
 նպաստում է մարդու բարիքին:

Թէ Քրիստոսի և թէ աշխարհի ուսմամբ
 մարդուն ուրիշներն են պահում ուստեցնում
 իմեցնում, միայն Քրիստոսի ուսմամբ
 մարդ աշխատում է ինքն ուրիշներին
 ծառայել, ուրիշներին որքան կարելի է
 օգտակար լինել, բոլորի համար
 պիտանի լինել, որպէս զի իրեն
 պահպանեն, ուստեցնեն, խմայնեն:
 Ծւ միշտ մարդիկ որքան էլ չար լինին,
 խնամքով կը կերակրեն ու կը
 պահպանեն իրենց համար
 աշխատողին:

Ուրեմն ինչպէս ապրելն է խելացի ու
 լաւ աշխարհի ուսման թէ՞ Քրիստոսի
 ուսմանը հետեւելով: **Փոխ. 6. 6.**